ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ **ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Խաչատուր Բալասանյանը, Անի Գալստյանը, Արտյոմ Գեվորգյանը, Գոռ Մեծոյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ստելլա Բադալյան, Խոսրով Թարվերդյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 07.10.2024թ. թիվ 01/04/06922-2024 գրությունը, Նոր Հաճընն համայնքի ավագանին որոշում է՝

1.Նոր Հաճընն համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 1.6.1 <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4819 <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածից << Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> ՊՈԱԿ -ին ֆինանսական միջոցների բարելավման նպատակով հատկացնել 500000 դրամ, որպես նվիրատվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 13 նիստի հետևյալ օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին

2. Համայնքի ղեկավարի առաջարկին հավանություն տալու մասին

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի՝ ըստ հատվածների, որից՝ եկամուտների գծով՝ 2 585 133.5 հազար դրամ ծախսերի գծով՝ 2 585 133.5 հազար դրամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1.

2)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2.

3) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3.

4) համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4.

5) համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5.

6) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1)համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.

2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ն/

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՄՄԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արման Ամբատյանը

_____